ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2019 թ.

«Ով, եթե ոչ մենք, ոչ դուք» քաղաքացիական
Նախաձեռնության անդամ
Գևորգ Քոթանջյանին
ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր,
Թումանյան 9ա, 12

Ձեր 21.08.2019թ. թիվ LRD7-6925-14F1-F286 գրությանը.

Հարգելի՛ Գևորգ Քոթանջյան.

Դուք հանդիսանում եք ՀՀ վարչապետի՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1658-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի անդամ և տեղյակ եք ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներին վերաբերող բոլոր առաջարկություններին: Առաջարկությունների փաթեթը ՀՀ քաղաքաշինության կոմիտեից ուղարկվել է վերը նշված խմբի բոլոր անդամներին: Այդ առաջարկությունների ցանկում է նաև Լոռու, Շիրակի և Արագածոտնի գյուղական բնակավայրերում անօթևան մնացած 453 ընտանիքների բնակապահովման համար նախատեսված 3 մլրդ դրամի բաշխումը ըստ մարզերի, այդ թվում՝ Լոռու մարզի գյուղական համայնքների 281 ընտանիքների համար առաջարկված է 1.78 մլրդ. դրամ: ՀՀ կառավարության համապատասխան որոշման ընդունումից հետո պարզ կլինի Լոռու մարզի 28 գյուղական համայնքներում ծրագրի իրականացման եղանակը և ֆինանսավորման ձևերը: Նշված համայնքներում կա վաճառքի ենթակա 51 բնակելի տուն: Ինչ վերաբերում է բնակարանների /բնակելի տների/ վաճառքի շուկայական գներին, որոնք փոփոխական են, առաջարկում եմ այցելել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կայքի / www.cadastre.am/ տեղեկատու բաժինը:Ինչ վերաբերում է համայնքապատկան կամ պետական կառույցներում /նրանց առկայության պարագայում/ բնակվող ընտանիքների կարգավիճակին, ապա

տեղեկատվություն ստանալու համար վերը նշված համայնքների ղեկավարներին ուղարկվել է շրջաբերական գրություն: Տեղեկատվությունը ստանալուն պես՝ այն կտրամադրվի Ձեզ:

Հարգանքով՝

Invalid signature

X

[redacted]

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

կատ. Լ.Ասլանյան
հեռ. /0322/ 4 22 29